

ՅԵՆԵՆԻՆԻՆԻ ԱՐԽԵՐԱՅԻ 1897Թ. ՆՈՅՆՄԵՐ և ԴԵՆՏԵՄԵՐ.

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻ

ԵՒ

ԻՐ ԸՂԻՐԻՐՆԵՐԸ.

ԳՐԻԳՈՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ.

Յայտնի է, թէ ինչ կարևորութիւն են ընծա-
յում այժմ Մովսէս Խորենացու աղբիւրների ու-
սումնասիրութեան. այդ միակ հաստատուն միջոցն
է՝ մեր կարծիքով, որով կարելի էր ստուգել և
ճշտել վերջերս այնչափ հետազոտութիւնների ա-
ռարկայ եղած Հայ պատմագրի հաւաստութեան աս-
տիճանը, որպէս և նորա ծաղկելու ժամանակը: Այս
անգամ մենք կանգ կառնենք Գրիգոր Աստուածաբանի
(+ 399) վերայ և առաջ կը բերենք սորա գրուածք-
ներից այն հատուածները, որոնցից անտարակոյս
օգտուել է Խորենացին:

Պէտք է դիտել, որ Գր. Աստուածաբանի գը-
րուածքները՝ իրենց տեսակով ընդհանրապէս շատ
ընտիր, թարգմանուել են հայերէն՝ նոր Հայկա-
զեան Բազմաբնի կաղմոզների ասելով, «Առաջին
Թարգմանչաց» ձեռքով և մինչև այժմ՝ ցաւակցա-
բար դեռ տպագրուած չեն:

Սորանից 10 տարի առաջ Մեծ. պ. Նորայր
հրատարակեց մի քանի հայերէն հին թարգմանու-
թիւնների և Խորենացու մէջ նշանակուած նման
հասոյածները, որոնց՝ նորա կարծիքով, փոխ է առել
Հայ պատմագիրը իւր «Հայոց Պատմութեան» համար.
այդ թարգմանութիւններն են՝ Վալլիսթէն, Փի-
լոն, Գրիգոր Նազազացի (կամ Աստուածա-
բան) և Գրիգոր Նիւսացի, Արդարեւ, մի քա-
նիսը այդ նմանութիւններից նկատուել էին դեռ Փի-
լոնի ու Վալլիսթէնի հրատարակիչները և Ն. Հայկ.
Բազմաբնի կաղմոզները. բայց պ. Նորայր աւելացրեց
մի շարք այլ նմանութիւններ և բոլորը միասին
տեղաւորեց իւր «Քննասէրի» Բ. պրակում (էջ
36—63):

Մեր նպատակից դուրս է բացատրել Խորենա-
ցու փոխառութիւնների ծագման սկզբնապատճառը.
բաւական ենք համարում սակայն նկատել առ այժմ
թէ համարիտ չենք յարգելի հայկաբանի այն ժա-
մանակ յայտնած կարծիքին—հետեւեցնել այդ փո-
խառութիւններից՝ յիշեալ հեղինակների Խորենա-

ցու ձեռքով թարգմանուած լինելը, («Քննասէր»,
Բ. էջ 29—35):

Յատկապէս Գր. Աստուածաբանի ճառերից պ.
Նորայր բերում է 17 դէպք Խորենացու նմանու-
թիւններից (Բնաւ., էջ 56—62), առանց սակայն
որոշակի նշանակելու այս կամ այն ճառի մէջ
հետաքրքրող մասերը կամ էջերը, որովհետեւ
Ստորհոյւմ նստած, չունէր նա իւր ձեռքին կարեօր
գրչագրեր և աշխատում էր միայն Ն. Հայկ. Բառ-
գրքի օգնութեամբ:

Անցեալ ամառ՝ Ս. Էջմիածնում և Վիեննա-
յի Գեր. Հ. Մխիթարեանց վանքում զրադուելիս,
առիթ ունեցանք մենք ծանօթանալ ի միջի այլ
գրչագրերի և Գր. Աստուածաբանի անտիպ ճառե-
րին, ուր գտանք նոր՝ դեռ ուրիշներից ուշագրու-
թեան չառնուած, բաղմաթիւ նմանութիւններ Խո-
րենացու «Հայոց Պատմութեան» հետ. Այդ իսկ
նիւթերն են, որ՝ լրացնելով «Քննասիրում» հրա-
տարակուածներով* և կարգի բերելով, առաջար-
կում ենք մասնագէտներին:

Գր. Նալաթեանց.

54 Օգոստոսի 1897 թ.

Մոսկուա.

Լազարեան ձեռնարան.

Մ. ԽՈՐԵՆԱՅԻ

ԵՒ

ԳՐ. ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ.

1.

Նոր. (Ա, 4). — «...դորոյ զպատճառն յետոյ
հատուցուր»:

Գր. Ածարան. — «...զկատարեալագոյն պատ-
ճառն յետոյ հատուցուր, յոր-
ժամ յաղագս ոչ գրեցելոց խօ-
սիցիմք» — («Առ. որս», գրչ. Վի-
էննա Մխիթ. Հ. 96, էջ 61 Բ.)

2.

Նոր. (Ա, 6). — «Արդ զայսոսիկ թէպէտ ա-
ռասպել որ, թէպէտ ծնմար-
տութիւն հաշուել համարեցի,
բայց ես որպէս հաւանեալ եմ
բազում ինչ ճշմարիտ է»:

* Պ. Նորայրի հրատարակածները աստղանի-
շով (*) ենք նշանակում մեր համեմատութիւնների
մէջ.

Գր. Ածաքան. — «Եթէ ճշմարտութիւն այսոքիկ իցեն և եթէ առասպել, որ ցուցանիցէ զճշմարտութիւնս ստեղծամբն:» — («Առ Յուլիանոս» Բ. գրչ. Ս. Էջմիածնի, Հ. 908, էջ ՄԻԵԶ.)

3.

Խոր. (Ա, 18). — «Այլ թէ ակործես առասպել՝ և Շամիրամ քար առաջի քան զՆիոբէ:»

Գր. Ածաքան. — «Եւ եթէ ակործես՝ բանիւն զքաջահաճոյսն ի բանին ... առաւելիաց:» — («Առ Աթանասիոս» գրչ. Վիէնն. Մխիթ. Հ. 217, էջ 109 Բ.)

4.

Խոր. (Ա, 24). — «Հեռեակամարաքն ի վերայ ուսոց ձիոց ըրեալք ...»

Գր. Ածաքան.* — «Զճառայս մեղաց ի վերայ ձիոց ըրեալք:» — («Ի Ժողովողն» գրչ. Վիէնն. Մխ. Հ. 217, էջ 248 Բ.)

5.

Խոր. (ի Պարս. Առասպ.). — «Մի արդեօք յունական պերճ և ողորկ առասպելք իցեն հանդերձ պատճառաւ, որք զճշմարտութիւն իրացն այլարանարար յինքեանս ունին թաղուցեալ:»

Գր. Ածաքան. — «Եւ եթէ ճշմարտութիւն այսոքիկ իցեն և եթէ առասպել, որ ցուցանիցէ զճշմարտութիւնս ստեղծմամբն:» — («Առ Յուլիանոս» Բ. գրչ. Ս. Էջմ. Հ. 908, էջ ՄԻԵԶ.)

6.

Խոր. (Բ. 9). — «Մի որ անհաւատացի, քանզի մեղէն իսկ ականատես եղաք այն զիւանին:»

Գր. Ածաքան. — «Անհաւատացի մի որ, քանզի և ոչ այլոց Աստուծոյ դատութեանցն:» — («Առ Յուլիանոս» Բ. գրչ. Հ. 908, էջ ՄԻԶ.)

7.

Խոր. (Բ, 38). — «Բայց Երուանդայ զմտաւ ա-

ծեալ, թէ որպիսի չար թագաւորութեան նորա մնանի ի Մարս:»

Գր. Ածաքան. — «Իբրև տեսի ես զայրն (զՅուլիանոս), վաղվաղակի ասացի. որպիսի չար Հռովմայեցւոցն մնանի:» — («Առ Յուլիանոս» Բ. Անդ. էջ ՄԻԶ.)

8.

Խոր. (Բ, 63). — «Աւաղելով (Երանեակ) զինքն, իբր չքնաղաղել ընդ վատակրպոյ և քաջատոհմիկ ընդ վատթարազուոյ բնակէ:»

Գր. Ածաքան.* — «Մի անարժան վարկցիս ընդունել զմկրտութիւն ընդ աղքատին՝ ճոխդ, քաջատոհմիկ ընդ վատթարազուոյն:» — («Ի մկրտութիւն հասարակաց» գրչ. Վիէնն. Մխիթ. Հ. 217, էջ 226 Բ.)

9.

Խոր. (Բ, 80). — «Որպէս կամք են իմոյս ասել քանի:»

Գր. Ածաքան.* — «Որպէս կամք են ասել իմոյ քանի:» — («Տէս պ. Նորայրի «Բննասէր», Բ. էջ 57.)

10.

Խոր. (Բ, 80). — «Որք (Ս. Արիստակէս և Ս. Վրթանէս) ոչ զպատիւն յինքեանս ձգէին, այլ պատիւն զնետ նոցա ընթացաւ:»

Գր. Ածաքան. — «Ոչ գողանայր (Ս. Բարսեղ) զիշխանութիւնն և ոչ յափշտակէր և զնետ ընթանայր զպատուոյն, այլ պատիւն զինի գայր:» — («Առ Բասիլիոս» գրչ. Վիէնն. Մխ. Հ. 217, էջ 140 Բ.)

11.

Խոր. (Բ, 88). — «Բայց զոր աստուածային Բանն առ Երրայեցւոցն անհրեարին համարեալ զարութեանն փոփոխուին, նոյն և աստանօր պատահի (ընդ Լիկիանոսի). ընծու անկարելի է զխայտուցն փոխել եւ յթովպացոյ զթը-

խութիւնն, նոյնպէս մարդոյ
ամբարշտի դրարանն»¹

Գր. Ածաքան. — «... զի և ոչ ունէր իսկ բը-
նութիւն ինձ ի բաց զնեւ
զխայտուցս եւ կամ Նթովաւաց-
ւոյն զսեւութիւնն, կամ
հօւր զայրելն, կամ չարն զմար-
դատեցութիւնն ի սկզբանն մար-
դասպան հանդիպեալ (Յուլիա-
նոս), և կամ զայն չարութիւնն,
որով հակառակ մեզ դիմեաց-
այլ որպէս ի յաղագս գետնա-
ռիւծուն է բան՝ ամենայն դիւ-
րաւ լինել և զամենայն փոխո-
խել և առնուլ զգոյնս, բայց
ի միջէ ի սպիտակութենէն...»
— (Առ Յուլիանոս, Ա. գրչ.
Ս. էջմ. Հ. 908, էջ ԺԿԹ.)

12.

Խոր. (Գ, 89). — «... որ քստ արժանեաց իւ-
րոց ամբարիշտս այս Արիոս ի
զարշելիսն ընկալաւ զսատա-
կումն:»

Գր. Ածաքան*. — «Այսմ կատաղութեանս
սկիւրն արար Արիոս ... որ և
զատաստան ետ զանարդել լե-
զուոյն ի զարշելի տեղիսն ըն-
կալեալ զսատակումն:» — (Առ
Աթանասիոս, գրչ. Վիէն. Մխ.
Հ. 217, էջ 110 ր.)

13.

Խոր. (Բ, 91). — «Սիրեցեալ (Ս. Գրիգոր)
զլերինս եւ զամայութիւն եւ
զհանդարտութեամբ մտաց յին-

քեան կեալ զի խօսիցի ընդ
Աստուծոյ անդբաղապէս:»

Գր. Ածաքան. — «Մին պատուէ զփախուս-
ալն եւ զլերինս եւ զամայու-
թիւնս եւ զհանդարտութիւն
զհոգուոյ և զմարմնոյ և զմը-
տացն յինքեանս երթալ զը-
նալ և անդէն դառնալ ի
«գայութեանց, որպէս զի խօ-
սիցի առանց աղոյ ընդ Աս-
տուծոյ ...» — (Յինքն և ի հայ-
րեն, գրչ. Վիէն. Մխ. Հ. 217,
էջ 105 ր.)

14.

Խոր. (Բ, 92). — «Աբբ, Արամեանք, մինչեւ
յնրբ էք ծանրասիրտք. ընդէր
սիրէք զնանրութիւն եւ զանաս-
տուածութիւն:»

Գր. Ածաքան*. — «Որդիք մարդկան, մինչեւ
ցնրբ էք ծանրասիրտք, նա-
խաշաւդեմ առ ձեզ ի մեծա-
ձայնէն Դաւթայ, ընդէր սի-
րէք զնանրութիւն եւ խնդրէք
զստութիւն:» — («Ի բանս և ի
հաւասարեցուցիչն», գրչ. Վիէն.
Մխ. Հ. 217, էջ 171 ր. — Եւս՝
«Առ այս» գրչ. Վիէն. Մխիթ.
Հ. 96, էջ 157 ր. նոյնպէս՝ «Ի
Կեսարոս», գրչ. Հ. 217, էջ
120 ր. Ծոյնը տե՛ս և՝ Սաղմոս,
Դ, 3, որ ունի սակայն «խըս-
տասիրաք» փոխ. Գր. Աստուա-
ծաբանի «Ծանրասիրտք»-ի:)

15.

Խոր. (Բ, 92). — «Որ շատխօսութեանն հոսանք
իբրեւ յաղբերէ դիմեն որպէս
ասաց ոմն ի հնոցն:»

Գր. Ածաքան. — «Զի՛նչ պաճուճանայն յայն-
ցանէ բարի իցէ կամ ո՞ր օգուտ
է բազում բանիցն, ուր շատ-
խօսութեանն հոսանք իբրեւ
յաղբերէ դիմեն յանգայու-
թենէն:» — («Ի Ժողովոզն», գրչ.
Վիէն. Մխ. Հ. 217, էջ 245 ր.)

1. Պրոմ. Կարին՝ սպացուցանելով Խորենացու
կողմից Լիկիանոսի պատմութեան մէջ (Բ, 88) Ս. Բաւի-
լիոսի վարժից օգտուելը, ենթադրում է, որ՝ Հայ
պատմագրի նոյն սեղ յիշածը — «ընձու անկարելի է զխա-
նուցս փոխել եւ Երովպացոյ գրիտրիսն» — առնուած պէտք
է լինի նոյն վարժից, «գոր Մ. Խորենացի գործածած է եւ
յնոյ աներեւոյր եղած է բնագրին մեկ մասին խանգարուած
ըլլալուն:» («Նորագոյն աղբիւրք Մ. Խորենացոյ», Ազգ-
Մասնագիտական, Ը. էջ 25.) Ընդունելով հանդերձ այս
ենթադրութեան հաւանականութիւնը, շեշտում ենք սակայն,
որ Գր. Աստուածաբանի մեր մէջ ընդմեջ հասուածն էլ ան-
ժամօր եւ անհետեւանք չէ մնացել Խորենացու համար:

16.

Խոր. (Բ, 92). — «Որ շատխօսութեանն հոսանք իբրեւ յաղբերէ զիմեն, որպէս ասաց ոմն ի հնոցն, և զկծեցուցանեն զամենայն զինարքուն ի հրապարակս»:

Դր. Ածարան*. — «Եւ պատշաճ համարիմ զամենայն հրապարակն շուրջանակի հնչեցուցանել այնպիսի բանիւք զամենայն զինարքուն զկծեցուցանել շատխօսութեամբ և աղճատանօք:» — (Առ որս, զրչ. Վիէն. Մխ. Հ. 96, էջ 7 ր.)

17.

Խոր. (Գ, 13). — «Բազմադիմի ջանայր (Եռլիանոս) շիջուցանել զհաւատքիստոնէութեանս, բայց ոչ ընտելութեամբ հաւանեցուցանէր, այլ խորամանկեալ հնարէր, զի ղեւք երկրպագեցին»:

Դր. Ածարան. — «Եւ եթէ հանդերձ արուեստիւ զինիցի (Եռլիանոս) և հաւանեցուցանելովն զընտելութիւնն զունիցէ, իբրեւ զկարթիւ շուրջ զգէշն պատելով... որպէս ասէք ձոմերոն, զի զոք պատուիցէ և ղիւացն ստեղծամբ զըստորինսն:» — (Առ Եռլիանոս, Ա. զրչ. Ս. էջմ. Հ. 908, էջ ԺԿԴ.)

18.

Խոր. (Գ, 13). — «Եւ յորժամ զնա (զԵռլիանոս) ընդգէմ Պարսից իրաւունքն զինեցին, և անցեալ ի Կիլիկիայ հասանէր ի Միջագետս»:

Դր. Ածարան*. — «Եւ յորժամ հակառակ Պարսից զնա (զԵռլիանոս) իրաւունքն զեղեցկապէս զինեցին, եկն առ մեզ փախստական երանելին...» — (Ի Կեսարոս, զրչ. Վիէն. Մխ. Հ. 216, էջ 118.)

19.

Խոր. (Գ, 13). — «...զՏիրան արձակէ (Եռլիանոս) զիմեն, որպէս ասաց ոմն ի հնոցն, և զկծեցուցանեն զամենայն զինարքուն ի հրապարակս»:

լիանոս) յիւր աշխարհն, և տայ զիւր պատկերն նկարագրեալ ի տախտակս, յորում և զղիւաց ոմանց ընդ նմա, և հրամայէ յի կեղեցիս կանդնել յարեւելից կուսէ. ասելով, թէ ուրք միանգամ ընդ Հոռլմայեցոց տէրութեանդ հարկին՝ զոյնպէս առնեն: Զոր յանձին կալեալ Տիրանայ, առեալ բերէ. ոչ ածելով զմտաւ, թէ իսպառութեամբ ղիւաց երկրպագին պատկերքս»:

Դր. Ածարան. — «Աւելնք են թագաւորականք... բայց Հոռլմայեցոց յոյժ ի փութալեացն պատկերաւք բազմամարդութեանն²) պատուել զթագաւորս: Բանդի ոչ բաւական, պսակքն և թագքն և Տիրանեացն ծաղիկք... այլ պարտ վարկանին և զերկրպագութիւնն ևս ի նոցանէն: ... Իսկ նա (Եռլիանոս) զի՛նչ հնարէր և կամ զի՛նչ քրիստոնէից հաստատութեանն կացուցանէր նենդութիւն... ի մի ածէր զաւելնս Հոռլմայեցոցն և զկոռցն երկրպագութիւն: Եւ յաղագս այնորիկ առ պատկերսն մերձ զրէր զղեւն և իբր զայլ ինչ ի սովորական գրեցելոցն առաջի ղնէր բազմամարդութեանն²) և քաղաքաց...» — (Առ Եռլիանոս, Ա. զրչ. Ս. էջմ. Հ. 908, էջ ԺՀԸ — ԺՀԹ.)

20.

Խոր. Գ, 17). — «Եւտ այսր ամենայնի ամբարշտն Եռլիանոս ըստ արժանի խորհրդոցն վէր ընկալեալ ի փորոտիսն սատակի ի Պարսս»:

Դր. Ածարան. — «Եթէ ոչ զեղեցկապէս կե-

2 «Բազմադիմի» (ընդհանր. ծղոցում = հրապարակաւ) նորեկացի փոխել և «կեղեցի»:

բակրեաց արեամբն այնորիկ և վիրաւն: զոր ի փորոտիսն ընկալաւ — (Յուլիանոս): — (Առ Յուլիանոսն, Ա. գրչ. վիէն. Մխ. Հ. 217, էջ 186^ա)

21.

Խոր. (Գ. 32). — «Պեղեալ երկուս խորս յոյժ քաջախորս եւ սաստկապէս լայնս»

Գր. Ածարան. — «Եղջերուք ... յոյժ քաջամեծք եւ սաստկապէս գէրք» — (Առ Բասիլիոս, գրչ. Հ. 217 էջ 136^ա)

22.

Խոր. (Գ. 37). — «Զվիշապացն մանուածս ահա գինն բերանարացութեամբ ուռուցեալ ի փշմանէ օգոյն»

Գր. Ածարան. — «Վիշապացն ահաւոր բերանարացութեամբ շնչեցեալք և ձգմամբ փողփողեալք մանուածութն խայտարղէտ անկուածովքն ...» — «Զի զօրինակ վիշապի շարժեցելոյ մանուածքն ոմանք անդէն արագագոյն ամբառնան ...» — (Առ Յուլիանոս, Ա. գրչ. 217, էջ 182^բ և 187^բ Տես նաև «Քննասեր», Բ. էջ 58 - 59)

23.

Խոր. (Գ. 61). — «... առեալ Մեծին և Մեարդայ զմեզ առաքեցին յԱղէքսանդրեայ՝ ի լեզու պանծալի, ի ստոյգ յօդանալ ճեմարանին վերաբանութեան»

Գր. Ածարան. — «Ոչ զարդարի (Կեսարոս) Պղատոնի և Արիստոտելի և Պիլոնի և Դիմոկրիտեայ ոմամբք, որք ի պանծալի ճեմարանէն են և յԱկադրիմեայ» — («Ի Կեսարոս», գրչ. 217, էջ 118^ա) — «Վասն այսորիկ զԱրիստոտելականն, զԱկադրիմեցիան և զպանծալի ճեմարանն ... այսու պսակեալ ...» — («Ի

Մաքսիմոս, գրչ. Հ. 217 վիէն. Մխ. էջ 167^ա)

24.

Խոր. (Գ. 62). — «Թեթեւակի ընդ խորս գիւանին (Եղեարտ) նաւեալ անշաք»

Գր. Ածարան. — «Թեթեւագոյնս նաւէր (Բասիլիոս) ընդ կենցաղոյս ծով ...» — («Ի Բասիլիոս, գրչ. վիէն. Մխ. Հ. 217, էջ 146^ա)

— «Թեթեւապէս գեր ի վերոյ քան զհերձուածոյսն նաւելով ...» — (Աղ, էջ 148^ա)

25.

Խոր. (Գ. 65). — «Գազաղացան մոգուցն լեզուք»

Գր. Ածարան. — «Գազաղացան լեզուք չարք և անօրէնք» — («Ի Բասիլիոս, գրչ. 217, էջ 147^ա)

26.

Խոր. (Գ. 67). — «Պատուեաց (Ս. Սահակ) զպատկերն, պատկառեաց ի կոշնականէն, փոխան քեաց զկեանսն»

Գր. Ածարան. — «Յղիցուք մաքուրք Արարչին, պատուեսցուք զպատկերն, պատկառեսցուք ի կոշմանէն, փոխադրեաց զկեանս» — («Ի բանս և ի հաւատար», գրչ. 217 վիէն. Մխ. էջ 171^բ)

27.

Խոր. (Գ. 65). — «... տուեալ (վռամայ) յաթոռ եպիսկոպոսապետութեանն զայլ ոմն ասորի, Շմուէլ անուն, զի լիցի ընդդիմափառ մեծին Սահակայ եւ հակառակաթոռ»

Գր. Ածարան. — «Մին համակամ և աթոռակից (Աթանասայ), իսկ միւս ընդդիմափառ եւ հակառակաթոռ և մին զանուն, բայց միւսն ձգմարտութիւն ունէր զփոխանորդութիւն» — (Առ Աթանասիոս, գրչ. վիէն. Մխ. Հ. 217, էջ 110^ա)

28.

Խոր. (Գ. 65). — «Բայց թէ ասիցէ որ, պարտ

է մեզ զասացեալսն մեծին Սահակայ ի Պարսից հրապարակախօսութեանն զրելլ զիտասցէ... զի և ես այլ եմ՝ ծերացեալ եւ հիւանդոտ և անպարպ ի թարգմանութեանց և զերարելլն միայն խոկացի... զի և քո կամքդ կատարեսցին և ես ճողովեցայց ի քոց հարկեցուցանող բանից և աղաչանաց...»

Գր. Ածաքան. — Պարտ և արժան է առն առաքինւոյ առ հանձարեղս բանի զիմաստութիւնն զօրացուցանելլ բայց ես ծեր եմ և ընդ երկայն կենաց անցի ժամանակ աշխատեցայ ի գտանելլ զաստուծոյ հաճոյսն ի ձեռն ճշմարտութեան խորհրդոցն» («Ի Ժողովոյն» գրչ. Վիէն. Մխ. Հ. 217, էջ 249 ր.)

— «... վասն զի վատահանալով յաղագս քո զբանս հաստատեցի: Ապա թէ հեռի և յոյժ ի բացեայ յուսոյն, զի՞նչ պարտ է ինձ կրել ծերութեամբ եւ հիւանդութեամբ և քո անձկով հաշեցելու մօ...» — (Առ Բասիլիոս) գրչ. Հ. 217, էջ 150ա.)

29.

Խոր. (Գ. 67). — «Զպարկեշտն զայն մարմին (Ս. Մեսրոպայ) եւ նախ քան զմահն կրթեալ ի մեռելութիւն:» — (Տես Պ. Յորայրի «Բննանասէր» Բ. էջ 60.)

30.

Խոր. (Գ. 68, Ողբք). — «Ողորմիմ՝ քեզ, եկեղեցի Հայաստանեայց...»

Գր. Ածաքան. — «Ողորմիմ՝ քեզ, ով եկեղեցիդ, առ քեզ է բանս Անտիօքու քաղաքդ...» — (Առ Մելիտոս) 3 գրչ. Հ. 217, էջ 156 ր.)

31.

Խոր. (Ողբք) — «Ոչ եւս տեսանեմ՝ զբանաւոր քո հօտ ի վայրի դաւարոյճ և առ ջուրս հանգստեան տածեալս... այլ ցրուեալս անպատաց և զահալիժութեանց...»

Գր. Ածաքան.* — «Եթէ պարտ իցէ զՍողոմոնին ասել պսակելլ զհօտս տարակուսեալ ի վայր անկեալ տեսանեմ. որքան լի տրամութեամբ և տխրանօք, ոչ եւս ի տեղւոյճ դաւարոյ հանգուցեալ և ոչ ի ջուրս հանգստեան սնեալ՝ խնդրէ զահալիժութիւնս և ամայութիւնս...» — («Ի Հայրն» գրչ. Հ. 217, էջ 126ա.) Հմմտ. նաեւ Սաղմոս, Իբ, 2.)

32.

Խոր. (Ողբք). — «Ողորմիմ՝ քեզ, եկեղեցի Հայաստանեայց...» Երանի առաջնոյ և երկրորդի փոփոխմանն...»

Գր. Ածաքան. — «Ողորմիմ՝ քեզ (ով եկեղեցիդ Անտիօքու) յանկարծակի փոփոխմամբ (var. փոփոխմանդ) այդուիկ, զիարդ անզարդացաւ զեղեցիկութիւնդ, զիարդ կողոպտեցաւ զարդն...» — (Առ Մելիտոս, գրչ. Հ. 217, էջ 156 ր.)

33.

Խոր. (Ողբք). — «(Հարուն.) զի էր ինչ ժամանակ հեռանալոյ փեսային և փեսաւիրին, և հարսնդ համբերեցեր՝ ողջախոհութեամբ զամուսնութիւն պահելով, որպէս ոմն նախքան զմեզ իմաստասիրեաց: Դարձեալ մինչև երբեմն ոմն սեղեխաբար յանդգնեալ յարձակեցաւ յանարատ առազատող եւ հարսնդ ոչ աղտեղացար...»

Գր. Ածաքան.* — «... ով ասիցէ մանկանց (var.

3. Այս ձևով Գրիգոր Նիւսեանցու նկատմամբ (+394) բայց հայ գրագրերը սխալմամբ Գր. Աստուածաբանի ձև-

ների մեջն են դասուած նորան միջ: (Տես Յուդակ հայեր. մեղագր. Վիեն. Միլիթ. Հ. 6. Տաշեւսկի եւս եւ Kra binger, Oratio in Meletium. Monachii, 1838.)

եկեղեցւոյն մանկանց), թէ որք
եղեն. ո՞ պատմեցէ հարսինն,
թէ այրի մնաց ... նահատակն
ի հանգէս կոչեցաւ և նահա-
տակէր յաղազս ճշմարտութեա-
նըն քրտամբք. իսկ հարսն համ-
քերէր ողջախոհութեամբ զս-
մուսնութիւնն պահելով: Ժամա-
նակ էր ի մէջ յովով. եւ ոմն
սեղեխարար յանդգնէր յանա-
րատ առաքատն. այլ հարսն ոչ
աղտեղանայր ...» — (Անդ, էջ
157^ա.)

34.

Խոր. (Ողբք).^{*} — «(Շարուն.) Սակայն դու և
ոչ այնմ զքեզ ամայի բոլորիցն
ցուցեր զանողրէն քոյոյն յու-
սալով դարձ ...»

Գր. Ածարան. — «(Շարուն.) յայնժամ մի-
թարէր զբաժանումն անողրէն
դառնալոյն յոյս ...» — (Անդ,
էջ 157^բ.)

35.

Խոր. (Ողբք). — «(Շարուն.) Իսկ յերրորդ
հեռանալս ոչ է ակնկալու-
թիւն դարձի, լուծեալ ի մարմ-
նոյս ընկերաւն և զործակցա-
ւըն: Ընդ Բրիստոսի լաւ է
նոցա բնակել և յԱրարամեա-
նըն հանգչել զոգս և զհրեշտա-
կացն տեսանել պարաւորու-
թիւնս: Բայց անհոգող դու
այրութեամբդ և եղկելիք մեք
որ զրկեցաք ի հայրենի վերա-
կացութենէն:»

Գր. Ածարան. — «Դարձեալ վերստին ճանա-
պարհ և դարձեալ փոխուստ.
երրորդ անգամ նոյնպէս, մին-
չե քայքայէր զհրճուածողա-
կան մառախուղն Տէր ... Բայց
այժմ զվերջին մեզ որ ոչ ումն
բաժանեցաւ վիհ մեծ ընդ մէջ
նորա և եկեղեցւոյն ի հասա-
րակածին հաստատեցաւ: Նա
ի զոգսն Արարամու հանգչի և

որ բերէ զկաթ զրոյն, զի զո-
վացուսցէ զվշտանգելոցն զե-
ղու, ոչ որ է:» — «Նմա լաւա-
գոյն էր ընդ Բրիստոսի լինել՝
լուծանելով ի մարմնոյն, բայց
մեզ չար որոշել ի հայրենի վե-
րակացութենէն:» — (Անդ, էջ
157^բ 156^ա.)

36.

Խոր. (Ողբք). — «(Շարուն.) Զի ոչ որպէս
ի հնումն ժողովուրդն այն, այլ
առաւել մեր է թշուառութիւն,
վասն զի Մովսէս բարձեալ լի-
նի և Յեսու ոչ յաջորդէ ա-
ռաջնորդել յերկիրն Աւետեաց:
Ռորովամ մերժեցաւ յիւրմէ
ժողովրդենէն ...»

Գր. Ածարան. — «... որով սպառազինութեամբ
առ ի չարին խարդախութիւնս
զինեցայց, ո՞ր Մուսէս այժմ
յաղթեացէ ... ո՞ր Յեսուս յետ
նորա զօրավարութեամբ աս-
տուածային պատերազմացն հան-
դերձ մեւք պատերազմեցէ ...
ոչ և Յորոքովամ ...» — («Յա-
ղազս ի ձեռնադր. հրաժարա-
րելոյ» զրչ. Վիէնն. Մխիթ.
հ. 217, էջ 110^ա — 110^բ.)

37.

Խոր. (Ողբք). — «(Շարուն.) պատերազմ
զմեզ շրջապատեաց և Մակա-
րէ ոչ փրկէ: Այժմ մարտք
ի ներքուստ և արհաւիրք ար-
տաքուստ. արհաւիրք ի հեթա-
նոսաց և մարտք հերձուածո-
ղաց և խորհրդականն չէ ի մի-
ջի՝ որ խրատէր և յարմարէր
ի պատերազմ:»

Գր. Ածարան. — «(Շարուն. 35. որդ հատուա-
ծի.) ի հայրենի վերակացու-
թենէն: Վասն զի ահա խոր-
հրդեան ժամանակ, և խոր-
հրդակիցն լուեալ է. պատե-
րազմ՝ զմեզ շուրջ պաշարէ,
պատերազմն հերձուածողա-
կան, և որ զօրավարն լինի՝ ոչ

որ է. փտանգի հիւանդութեամբ
հասարակաց մարմին եկեղեցւոյ,
և զրօշկին ոչ գտանեմք:» (Առ.
Մեկիտոս): Անդ, էջ 156^ա.)

38.

Խոր. (Ողբը). — «Շարուն.՝ Աւաղ զրկանա-
ցըս, աւաղ թշուառական պատ-
մութեանս. որպէս զախտս
հանդուրժեցից բերել, զի-
ւորդ զմիտս իմ և զլեզուս
պնդեցից և հատուցից զքանս
հարցն՝ փոխանակ ծննդեան և
սննդեանն:»

Գր. Ածարան. — «Շարուն.՝ Տեսանէք յոր-
պիսի մեր իրքս կան. կամիմ
եթէ որպէս կարողութիւն է
պնդելով զիմ ակարութիւնս
եղանել ի վերոյ քան զծարնու-
թիւն թշուառութեանս արձա-
կել ձայն արժանաւոր ախտիս,
որպէս առաքինիք այնորիկ ա-
րարին մեծաձայն ի վերայ հօրն
թշուառութեան որբալով: Այլ
զի՞նչ կրեցից, զիւրդ բռնա-
դատեցից զլեզուս ի սպասա-
ւորութիւն քանիս ... Ո՛վ թը-
շուառական պատմութեանն
այնորիկ ...» (Անդ, էջ 156^ա,
157^բ.)

39.

Խոր. (Ողբը). — «Եւ մինչ նոցա զմերն յու-
սային դարձ ... համայն և մեք
զիմեալք փութապէս ի Բիւ-
զանդիոյ յուսայաք հարսա-
նեաց պարել անվհեր երա-
զութեամբ կրթեալք, և առա-
գաստի ասել երգս, արդ փո-
խանակ խրախճանութեանն՝ ի
վերայ գերեզմանի ողբս ասե-
լով՝ ողորմելի հառաչեմ. ուր
և ոչ տեսութեանն ժամանեցի
աչաց նոցա կափուցմանց և լը-
սել զվերջին բարբառն և զօրհ-
նութիւն:»

Գր. Ածարան. — «Եայնժամ իբրեւ ի հարսա-

նիս պարէաք և այժմ ողոր-
մելի ի վերայ ախտիս հառա-
չեմք. յայնժամ առագաստի
երգք և այժմ ի վերայ գերեզ-
մանի ողբք, վասն զի բարձա-
ի մէջ քաջ փեսայն (Մեկի-
տոս եպիսկոպոսն Անտիոքու):»
— (Անդ, էջ 156^ա.)

40.

Խոր. (Ողբը). — «Ո՛ւր է քաղցր աչացն հան-
դարտութիւն առ ուղիղս և ա-
հաւորութիւն առ թիւրս. ո՛ւր
զուարթ շրթանցն ժպտումս
առ բարի աշակերտացն հան-
դիպումն ...»

Գր. Ածարան.* — «Ո՛ւր է պայծառ առագաստն
այն հոգւովն սրբով յամենայն
ժամ ուղիւս ... ո՛ւր քաջ նա-
ւուղիղն, որ զվերինն դիտե-
լով ուղղէր զնաւն ... ո՛ւր է
քաղցր աչացն հանդարտու-
թիւն, ո՛ւր զուարթ շրթանցն
ժպտումն ...» — (Անդ, էջ 156^բ.)

41.

Խոր. (Ողբը). — «Կորեաւ ժողովորդն, թագեաւ
նաւահանդիսան, ելիք օգնա-
կանն, լռեաց ձայնն յորդորե-
ցուցիչ:»

Գր. Ածարան. — «Կորեաւ զեղեցկութիւնն
այն, լռեաց ձայնն, կարկե-
ցան շրթունքն, թռեաւ շը-
նորհն:» — (Անդ, էջ 157^բ.)

42.

Խոր. (Ողբը). — «Ո՛վ կարկեացէ զյանդգնու-
թիւնն ընդէմ՝ առողջ վարդա-
պետութեանն հակառակ յա-
րուցելոցն, որք ամենայն քա-
նիւք քակտեալք եւ քայքա-
յեալք յոլովս փոփոխեն
վարդապետս եւ քաղում՝ զիրս,
որպէս ասաց օմն ի հարցն:»

Գր. Ածարան. — «Բայց զի՞նչ ասիցէ որ վասն
սնտախառութեան և կամ վասն
իշխանաւորութեան զանիրա-
ւութիւն ի բարձունս խօսողա-

ցըն ... ոչ ընդդէմ՝ Մոսկովի, այլ ճշմարտութեան զինեցելոց և առողջութեան վարդապետութեան հակառակ յարուցելոց, որք երբորդ մասին յաղագս անխրատութեան և որ զհետ նորին երթան խրատութեան յախուռն ամենայն բանիւ զիմեն վարնազական ախտիւն և կոխեն զգեղեցիկ մարդարիտս ճշմարտութեան, որք միանգամ և ոչ մի ինչ ինքեանց կարծիս բերեն ... այլ երբեմն յայլմէ դանդաղեալք և շրջեալք և ամենայն քանիւ քակտեալք եւ կոխեալք յուրմի փոփոխեն վարդապետս եւ քաղում զիրս, որպէս փոշի հողմովք զիւրազոյն ի բաց անկեալք ...» — («Յաղագս ի ձեռնադր. հրաժարելոյ», զրչ. Վիէն. Մխ., հ. 217, էջ 96^ա.)

43.

Խոր. (Ողբք). — «(Շարուն.) առ ամենայն քան նմանապէս դժուարին եւ չար օրինակ զրեն զայն անձանց՝ զծիժաղելն զմեք եւ զարհամարհելն իրրեւ զանհաստատնովք եւ որ ոչինչ (var. որ ինչ) պիտանացու ունիցի արուեստս»

Գր. Ածարան.* — «(Շարուն.) Ո՞վ անբանութեանս. առ ամենայն քան նմանապէս դժուարին եւ չար օրինակ ինքեանց զրեն զայն շ[ի] ծիժաղելն զմեք զարհամարհելն իրրեւ զանհաստատնովք եւ որ ինչ առողջագոյնս ունիցի և զհաւատովն զանցանեն անհանձարաբար յասողացն ի բանս ...» — (Անդ, էջ 96^ա.)

44.

Խոր. (Ողբք). — «Զմտաւ զայսոսիկ ածելով հառաչումն յիս ի ներքս ընթանայ եւ արտօսը և կամե-

ցուցանէ բարբառել բան տըխրական եւ սգաւոր»

Գր. Ածարան. — «Եւ յիս սարսափումն իմն ի ներքս ընթանայ եւ արտօսը միանգամայն յիշելով զբանչեքին ...» — («Ի Բոյրն», զրչ. Վիէն. Մխիթ. 217, էջ 125^ա).

— «Լուայ և ձայնս ոմանս ի յերեմեայէ տխրականս եւ սրգաւորս, որովք յամայնալ քաղաքին Երուսաղէմացւոց ողբայր» — («Յաղագս ի ձեռն. հրաժար.», Անդ, էջ 96^ա.)

45.

Խոր. (Ողբք). — «Ո՞վ մեզ յայսոսիկ ճառակցէ հաւասարելով տրտմութեանըս և օգնեսցէ ախտացելով ասիցս ... Զարթիւր Երեմիաս, զարթիւր և ողբան հանգերձ մարգարէութեամբ որ ինչ թըշուառացաքս և որ ինչ թըշուառանալոցս եմք ...»

Գր. Ածարան. — «Ո՞ր ոք յերեմիաս ողբացէ զմեր խառնակութիւնս և զխաւարս, որ միայնն զիտէր հաւասարեցուցանել զողբս ախտիցն ...» — («Առ Աթանաս», զրչ. հ. 217, էջ 110^բ.)

46.

Խոր. (Ողբք). — «Աշակերտք հեղզ առ ուսումն և փոյթ առ ի վարդապետել, որք նախ քան զտեսութիւնն Աստուածաբանք ...»

Գր. Ածարան.* — (Տէս Ծոր Հայկ. Բառգիրք, Աստուածաբան բառի տակ ուր Խորենացու այս տողերի մասին ասած է. «առեալ ի բանից Աստուածաբանին».)

